


**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ**  
**ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ , 2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ**

Պատվաստումներում ընդգրկվածության 2012-2019թթ. ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության նվազում:



**Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշներն Հայաստանի Հանրապետությունում, %**

**Աղյուսակ 1.** Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների համեմատություն, 2018-2019 թթ.


Հ/հ	Մարզ	1տ. ամբողջական ընդգրկվածության ցուցանիշ /%/			2տ. ամբողջական ընդգրկվածության ցուցանիշ /%/			6տ. ամբողջական ընդգրկվածության ցուցանիշ /%/		
		2018թ	2019թ (I-VIII ամ.)	2019թ (I-XII ամ.)	2018թ	2019թ (I-VIII ամ.)	2019թ (I-XII ամ.)	2018թ	2019թ (I-VIII ամ.)	2019թ (I-XII ամ.)
1.	Արագածոտն	91,9	90,4	92,1	95,4	95,8	96,2	97,9	98,2	98,4
2.	Արարատ	91,2	89,7	90,7	94,7	93,9	94,5	98,1	96,9	97,1
3.	Արմավիր	94,3	93,6	93,3	95,4	95,4	94,9	98,1	97,9	97,1
4.	Գեղարքունիք	88,2	87,8	88,9	90,9	88,6	90,1	94,9	95,3	95,2

5.	Լոռի	93,3	92,5	91,9	95,7	95,8	95,9	98,2	98,2	97,9
6.	Կոտայք	92,8	92	92,1	93,8	94,3	93,9	97,1	97,6	97,2
7.	Շիրակ	93,4	92,9	92,4	96,2	95,4	95,9	97,7	97,4	97,8
8.	Սյունիք	88,6	87,4	87,5	92,2	90,4	90,3	96,3	96,8	96,2
9.	Վայոց Ձոր	92,4	92,7	93,9	96,2	92,8	94,3	99,5	99,1	99,3
10.	Տավուշ	89,6	90,3	90	92,4	92,6	91,6	96,2	97,3	95,9
11.	Երևան	85,8	84,5	85,1	85,4	86,2	86,8	92,2	92,5	92,6
	«	<b>89,8</b>	<b>88,7</b>	<b>89,2</b>	<b>91,3</b>	<b>91,2</b>	<b>91,6</b>	<b>95,6</b>	<b>95,6</b>	<b>95,6</b>

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետության բոլոր մարզերում և Երևանում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ դիտվել է ցուցանիշների նվազում: Հանրապետությունում 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,6%-ով և կազմել է 89,2% (սահմանված նվազագույն ցուցանիշը 90%), 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 0,3%-ով՝ կազմելով 91,6%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը սահմանվել է նույնը՝ կազմելով 95,6%:

2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել Երևանում (85,1%), Սյունիքի (87,5%), Գեղարքունիքի (88,9%) և Տավուշի (90%) մարզերում: Կից հավելվածով ներկայացվում է 2019 թվականի Հայաստանի Հանրապետությունում իմունականիսարգելման գործընթացի ցուցանիշների համառոտ տեղեկատվությունը:


## ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄՆԵՐ



### Գծապատկեր 2՝ ՀՀ-ում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի, 2012-2019թթ.

2019 թվականին դիտվել է պատվաստումներից հրաժարումների թվի աճ, հատկապես հնգավալենտ (2032 հրաժարված) և պնևմակոկային (1924 հրաժարված) պատվաստումներից (Գծապատկեր 2):

## ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱԶՈՂ ԴԵՊՔԵՐ



### Գծապատկեր 3՝ ՀՀ-ում հետպատվաստումային անբարեհաջող դեպքերն՝ ըստ առանձին պատվաստանյութերի, 2012-2019թթ.